

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

09.02.2016թ. խորհրդի նիստի

Նախագահ՝ Ֆ. Յուլսկյան

Քարտուղար՝ Մ. Խաչատրյան

Խորհրդի 24 (քսանչորս) անդամից ներկա էին 18-ը (տասնութ):

ՕՐԱԿԱՐԳ՝

1. «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահի ընտրության հարց:
Ձեկ՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան
2. ԳՊՄԻ-ի 2015 թվականի տարեկան գործունեության հաշվետվություն:
Ձեկ՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան
3. ԳՊՄԻ-ի 2016 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:
Ձեկ՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան
4. Ընթացիկ հարցեր:

Մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Ա. Մկոյանը՝ որպես խորհրդի ավագ անդամ, բացելով նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և առաջարկեց վարել խորհրդի նիստը մինչ խորհրդի նախագահի ընտրությունը: Ա. Մկոյանը, դիմելով լսարանին, քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 18 անդամ. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.ԼՄԵՑԻՆ.– «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահի ընտրության հարցը (հաղ.՝ մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի պրոֆեսոր, մ.գ.դ. Ա. Մկոյան):

ԳՊՄԻ-ի խորհրդի նախագահի պաշտոնում Ա. Մկոյանի կողմից առաջադրվեց ՀՀ Շիրակի մարզպետ Ֆ. Յուլսկյանի թեկնածությունը և առաջարկվեց խորհրդի անդամներին առաջադրելու այլ թեկնածություններ: Խորհրդի նախագահի պաշտոնը զբաղեցնելու

համար այլ թեկնածությունների առաջադրման բացակայության պարագայում քվեարկության դրվեց Ֆ. Յուլայանի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Քվեարկության արդյունքում (**ՔՎԵԱՐԿԵՑԻՆ** – 18 անդամ. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:) «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի խորհրդի նախագահ միաձայն ընտրվեց ՀՀ Շիրակի մարզպետ Ֆ. Յուլայանը:

Քվեարկությունից հետո Ա. Մկոյանը շնորհավորեց Ֆ. Յուլայանին ԳՊՄԻ-ի խորհրդի նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ և նրան փոխանցեց նիստը վարելու իրավունքը:

Ֆ. Յուլայանը շնորհակալություն հայտնեց խորհրդի անդամներին վստահության համար: Նա նշեց, որ ԳՊՄԻ-ին Հայաստանի ամենահին բուհերից է, որի գործունեությունն առ այսօր բարձր են գնահատում հանրապետության մի շարք հեղինակավոր դեմքեր: Միաժամանակ նկատեց, որ այսօր ՀՀ բուհերը միջազգային չափանիշներով հետ են մնում աշխարհի լավագույն բուհերից: Եվ այդ հարցի լուծումը տեսնում էր ինչպես յուրաքանչյուր աշխատակցի, այնպես էլ ամբողջական մակրո համակարգերի արմատական բարեփոխումների մեջ: Խրախուսելով բուհին՝ հաջողություններ մաղթեց բուհի կոլեկտիվին հետագա գործունեության ընթացքում:

2.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի 2015 թվականի տարեկան գործունեության հաշվետվություն (զեկ.՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան):

Ռեկտոր Վ. Գրիգորյանը, նախքան զեկույցի բուն բովանդակությանն անցնելը, ևս շնորհավորեց պարոն Ֆ. Յուլայանին՝ խորհրդի նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ և հույս հայտնեց, որ նրա անմիջական մասնակցությամբ բուհը կլուծի բարդ խնդիրները:

Ռեկտորի ներկայացմամբ՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի կառավարման գործընթացներն ինչպես նախորդ, այնպես էլ հաշվետու 2015 տարում եղել են միտված ուսումնական, գիտական և հասարակությանը

մատուցվող այլ ծառայությունների շարունակական բարելավմանը: Բուհը, հավատարիմ մնալով իր առաքելությանը, հետևել է որոշակի նպատակների, մասնավորապես՝ իրականացրել որակի մշակույթի ձևավորմանն ուղղված քայլեր, ապահովել հարափոփոխ միջավայրին, ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան փոխանցելի գիտելիքներ և հմտություններ ունեցող շրջանավարտների թողարկում, նպաստել տրվող որակավորման աստիճանների մրցունակությանը և մատուցվող ծառայությունների թափանցիկությանը՝ բարձրացնելով բուհի գործունեության արդյունավետությունը և հաշվետվողականությունը: ԳՊՄԻ-ի կառավարման համակարգի և վարչական կառույցների գործունեությունը միտված է եղել բուհի առաքելության և նպատակների իրականացմանը:

Հաշվետվությունը կառուցված էր ներքոհիշյալ հիմնական կետերի շուրջ.

1. կրթական գործունեություն,
2. որակի ներքին ապահովում,
3. ուսանողներ,
4. պրոֆեսորադասախոսական կազմ,
5. գիտական գործունեություն,
6. արտաքին կապեր և համագործակցություն,
7. ֆինանսական հաշվետվություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. ՀՀ ԱԺ պատգամավոր Ս. Ավետիսյանը, «Ֆոտոն» վարժարանի տնօրեն Մ. Մովսիսյանը, ԳՊՄԻ-ի մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի պրոֆեսոր, մ.գ.դ. Ա. Մկոյանը:

Ս. Ավետիսյանը, մեջբերելով հաշվետվությունում ներկայացված ԳՊՄԻ-ի 2015 թվականի գերազանց շրջանավարտների թիվը /ԳՊՄԻ-ի շրջանավարտներից 22-ին տրամադրվել է գերազանցության դիպլոմ որից 3-ը՝ բակալավրիատ, առկա ուսուցում, 1-ը՝ բակալավրիատ, հեռակա ուսուցում, 18-ը՝ մագիստրատուրա/, հետաքրքրվեց նրանց աշխատանքի տեղավորման վերաբերյալ առկա տեղեկատվությամբ:

Վ. Գրիգորյանը այդ հարցին պատասխանեց, որ բուհում գործում է բուհ-գործատու համագործակցության կենտրոն, որը զբաղվում է շրջանավարտների աշխատանքի տեղավորման հարցերով: ՇՄ դպրոցներում թափուր տեղերի մրցույթներին գլխավորապես դիմում են ԳՊՄԻ-ի շրջանավարտները: Մասնավորապես ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի աշխատակիցների մեծ մասը ԳՊՄԻ-ի բարձր առաջադիմությամբ շրջանավարտներն են:

Մ. Մովսիսյանը նկատեց, որ իր տնօրինած վարժարանում հայտարարված թափուր տեղերի մրցույթով ԳՊՄԻ-ի թվով հինգ շրջանավարտ արդեն իսկ աշխատում է: Այսինքն՝ լավ պրակտիկա անցած շրջանավարտները գտնում են իրենց տեղն աշխատաշուկայում:

Մասնագետների պատրաստման գործընթացում պրակտիկայի գործընթացի հետագա բարելավման համար առաջարկեց անցկացնել սոցիոլոգիական հարցումներ ոչ միայն ուսանողների, այլև դպրոցի վարչական անձնակազմի հետ: Ըստ նրա՝ դպրոցների տնօրենների առաջարկները ևս կարող են նպաստել մասնագետների պատրաստման համար չափազանց կարևոր մասի՝ պրակտիկայի բարելավմանը:

Նա շնորհակալություն հայտնեց բուհի ղեկավարությանը՝ ամենամյա անաչառ, արդար օլիմպիադաների կազմակերպման համար, որոնցից Ֆոտոն վարժարանի սաները հեռացել են գոհունակությամբ: Որպես ԳՊՄԻ-ի կառավարման խորհրդի անդամ, ԳՊՄԻ-ի գործընկեր ու գործատու՝ շեշտեց, որ քաջատեղյակ է բուհի բարեփոխումների գործընթացին և առաջարկեց բուհի մեկամյա աշխատանքը գնահատել բավարար:

Ա. Մկոյանի խոսքերով՝ ժամանակակից բուհը հեռու չի կարող մնալ կրթական տարածքում ծավալվող իրադարձություններից: Նոր հայեցակարգը պահանջում է արմատապես բարելավել կրթության բոլոր գործիքները՝ մանկավարժական տեսությունները, մեթոդներն ու եղանակները, ուսուցման սկզբունքներն ու միջոցները:

Այդ տեսանկյունից ԳՊՄԻ-ի ղեկավարությունը, նրա բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները, ամբողջ կոլեկտիվը մեծ

աշխատանք են կատարել բուհում կրթական բարեփոխումների իրականացման ճանապարհին:

Ինստիտուտում առկա ուսումնականության բազան, ժամանակակից համակարգչային լսարանները, գրքային հարուստ ֆոնդը, էլեկտրոնային դասախոսությունները և բարձրորակ գիտամանկավարժական կադրերը ռեալ հնարավորություն են ստեղծել՝ ծավալելու ուսումնական, կրթադաստիարակչական, գիտական արդյունավետ գործունեություն: Թարմացվել և բարելավվել են առարկայական նկարագրերը, գնահատման համակարգը, պրակտիկայի տեսակները:

Ա. Մկոյանի համոզմամբ՝ կարելի է արձանագրել, որ ձևավորվում է նոր, ավանդականից տարբեր բուհական միջավայր:

Ինչ վերաբերում է խնդիրներին, ապա հիշատակեց.

- բուհում որոշ աշխատակիցների կողմից կրթական բարեփոխումների գաղափարի մերժումը,
- միջինից ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների հեշտացված մուտքը բուհական համակարգ,
- բուհում ուսանողների հետ դաստիարակչական աշխատանքի կանոնակարգված կազմակերպման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի 2015թ.-ի գործունեությունը գնահատել բավարար և որոշման նախագիծը ընդունել հիմք՝ արված առաջարկություններով հանդերձ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 18 անդամներ. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի 2016 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում (զեկ.՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյան):

Վ. Գրիգորյանի ներկայացմամբ՝ ԳՊՄԻ-ի 2016 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը ներառում է իր մեջ ինչպես բուհի, այնպես էլ ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի, Գյումրու մշակույթի վարժարանի՝ նախկին թիվ 12 ավագ դպրոցի, ԳՊՄԻ-ի միջին մասնագիտական կրթության բաժնի էլակետային ֆինանսական տեղեկատվությունը:

Եվ, իհարկե, ԳՊՄԻ-ին շարունակում է լինել ՀՀ Շիրակի մարզի խոշոր հարկատուներից մեկը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ԳՊՄԻ-ի 2016 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 18 անդամներ. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ՆԱԽԱԳԱՀ՝

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ